

MASTERBRACE ADH 1406 (CONCRESE 1406)

Երկրադարիչ, էպօքսիդային հիմքով առանց լուծիչի, մածուցիկ ծեփոն



Բնութագրություն

MASTERBRACE ADH 1406-ը բազմամպատակ անկերաժային և մոնտաժային այս ծեփոնը նախատեսված է ինժեկցիոն փաթեթների ամրացման և անթափանցելիության համար, մետաղական էլեմենտների, ամրանների, խարիսխների (анкераж), ցցածողերի (штырь), զանազան կառուցվածքային նյութերի սոսնձման համար, ինչպես նաև զանազան ջարդվածքների և տեղահանվածքների վերնորոգման, բենտոնի մեջ առաջացած ստատիկ ճաքերի լցումման համար:

Կիրառման ոլորտ

- Մետաղների տեղակայում բետոնի և քարե պատերի մեջ (քիմիական դյուբել),
- լայն ճեղքերի վերանորոգում և վերացում,
- մետաղական և պողպատե դետալների սոսնձում բետոնի մեջ և պողպատե կոնստրուկցիաների վրա,
- ինժեկցիոն ճաքերի արտաքին մակերևույթի լցափակում (заделка) և ինժեկցիոն փաթեթների ամրացում,
- ստատիկ ճաքերի լցումում,
- կամուրջների պարիսպների և երկրաշարժի մարիչների ամրացում,

- հիմնահեղույսների (болт) և ցցածողերի (штырь) անկերաժ:

Առավելություններ և յուրահատկություններ

- Ծածկերի վրա չի թողնում կախընկածություն,
- բետոնի և երկաթի գերազանց հարակցում (адгезия),
- մեխանիկական ամրության արագ ձեռքբերում,
- կայուն է քիմիական նյութերի նկատմամբ,
- անթափանց է զազի և ջրի հանդեպ,
- նույնիսկ խոնավ մակերևույթների վրա պահպանում է իր բարձր հարակցվածության ամրությունը:

Կիրառման եղանակ

Հիմնանյութի պատրաստումը՝ Նյութով պատվող բետոնե մակերևույթը նախօրոք պետք է մաքրել փոշուց, յուղերից և շինարարական մնացորդներից: Մետաղական մակերևույթները պետք է մաքրել կամ մետաղական խոզանակով կամ ավազաշիթային սարքով: Հեռացնել ժանգը և սրբել լուծիչով: Տեխնիկական բնութագրերի աղյուսակում բերված են փոքր քանակությամբ ծեփոն ստանալու համար խառնուրդի համամասնությունները: Բետոնի մակերևույթը (կախված եղանակային պայմաններից) պետք է պահել ոչ պակաս 21 օրից: Բետոնի վրա եղած թերությունները, փխրուն մասերը պետք է վերացնել, իսկ մակերևույթի վրա ստեղծել խորդուբորդություն: Մակերևույթի կտրված եզրերը հնարավորինս կտրել ուղղաձիգ, ամրանը մաքրել ժանգից, անհրաժեշտության դեպքում ավելացնել նոր ամրան: Եթե մակերևույթով ջուր է հոսում, ապա իրականացնել դրենաժ կամ վերացնել այդ հոսքը համապատասխան ձևով: Մակերևույթը մաքրել յուղից, ներկից, կրից և այլ մնացորդներից, որից հետո փչել սեղմած օդով: **Նախապատրաստումը՝** Երբ մակերևույթն արդեն պատրաստ է, A և B բաղադրիչները պետք է իրար խառնել ցածր պտույտանի խառնիչով (миксер) 3 րոպեի ընթացքում մինչև ստացվի

համասեռ գորշ գույնի մասսա: Խառնուրդի համամասնությունները խառնել իրար՝ հաշվի առնելով նյութի անհրաժեշտ քանակությունը և պահպանվածության ժամանակը աշխատանքային իրավիճակներում:
Խառնուրդի հարաբերակցությունը՝

MASTERBRACE ADH 1406 (CONCRETE1406)	Բաղադրիչ A	Բաղադրիչ B
Խառնուրդի քանակը	3.75 կգ	1.25 կգ
Խառնուրդի խտությունը	1.70 կգ/լ	

Կիրառումը՝ Նյութը նախապատրաստած մակերևույթին պատվում է թիակով (առտել) կամ բահիկով: Նվազագույն աշխատանքային հաստությունը պետք է լինի 2մմ: Մեկ շերտի համար առավելագույն հաստությունը չպետք է գերազանցի 30մմ-ը:

Տեխնիկական բնութագրեր

Նյութի կառուցվածքը MASTERBRACE ADH 1406 Բաղադրիչ A MASTERBRACE ADH 1406 Բաղադրիչ B	Էպօքսիդային խեժ Էպօքսիդային պնդարար
Գույնը	Մոխրագույն
Խառնուրդի խտությունը	1.70 ± 0.05 կգ/լիտր
Սեղմման ամրությունը (20°C) EN196 (1 օր) (7 օր)	30 Ն/մմ ² 75 Ն/մմ ²
Ծռման ամրությունը (20°C) EN196 (1 օր) (7 օր)	17 Ն/մմ ² 25 Ն/մմ ²
Կցորդման ամրությունը (7 օր) բետոնին (EN 1542) պողպատին	> 3.0 Ն/մմ ² > 3.5 Ն/մմ ²
Պատման հաստությունը	Նվազագույնը՝ 2 մմ, առավելագույնը՝ 30մմ
Շրջակա միջավայրի և մակերևույթի ջերմաստիճանը	+5°C - +30°C
Խառնուրդի կենսունակությունը (20°C)	40 րոպե
Հաջորդող ծածկույթները (20°C)	18-24 ժամ
Շահագործման ջերմաստիճանը	-15°C - + 90°C
Ամբողջովին չորանալը (20°C)	7 օր

Մոտավոր ծախս

Ծախսը 1մմ հաստության համար կազմում է 1.7կգ/մ²:

Օգտակար տեղեկատվություն

Համոզվել բաղադրիչների ճիշտ համամասնության (пропорция) մեջ: Չկիրառել շրջակա միջավայրի և հիմքի +5°C-ից ցածր ջերմաստիճանային պայմաններում:
MASTERBRACE ADH 1406-ը տաքացնել մինչև +20°C՝ ընկղմելով այն փակ փաթեթով +20°C ջերմաստիճանով ջրի մեջ:

Փաթեթավորում

Բաղադրիչ A՝ 3.75կգ-անոց թիթեղաման
 Բաղադրիչ B՝ 1.25կգ-անոց թիթեղաման

Պահպանման պայմաններ

Պահպանել օրիգինալ փաթեթով չոր վայրում +5°C-+25°C ջերմաստիճանային պայմաններում: